ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՐՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ № 190

22-ը սեպտեմբերի 2020թ.
Ք. ՆորՀաճն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Լիլիյա Հակոբյան ԱՁ-ն դիմել է իր գործունեության վայրում՝ ՆորՀաճն համայնքի Պ. Սևակի 1/9/1 հասցեում գտնվող 50-ից մինչև 75ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ №5308 ,5309 անդորրագրերի դիմումատուն 2020 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի № 47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Լիլիյա Հակոբյան ԱՁ-ին* (վկայականՈ№ 01Ա100815) իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Պ. Սևակի 1/9/1 հասցեում գտնվող 75ք.մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, իրականացնելու ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

22-ը սեպտեմբերի 2020թ.
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2020թվականի N 191

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Անդրանիկի փողոցի 1-ին շենքի 71 բնակարանի բնակիչ Հայկ Անդրանիկի Դալլաքյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2020թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակիչ Հայկ Անդրանիկի Դալլաքյանին, եղբոր՝ Վարդան Դալլաքյանի հուղարկավորության ծախսերը հոգալու նպատակով:
2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Գ.Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը սեպտեմբերի 2020թ. N 192
Նոր Հաճն

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով ,Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18-ը մայիսի 2006 թվականի N 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը որ բնակելի տունը, անասնաշենքը, ավտոտնակը, զուգարանը և քարե պարիսպը կառուցվել են 1995 թվականին, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով՝ Վլադիմիր Ադիբեկի Առաքելյանցի (ծնված՝ 18.05.1951թ) դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը ***որոշում եմ՝***

1. Ճանաչել Վլադիմիր Ադիբեկի Առաքելյանցի սեփականության իրավունքը Նոր Հաճն համայնքում գտնվող՝ 07-006-0054-0011 կադաստրային ծածկագրով, 0.080 հա տնամերձ հողամասը (հիմք՝ քաղվածք հողային բարեփոխուներ և սեփականաշնորհման հանձնաժողովի 12.09.1991 թվականի թիվ 9 որոշմամբ) և դրանից ավել օգտագործվող մինչև 20 տոկոս 0.00759 հա հողամասի նկատմամբ /ընդամենը՝ 0.08759 հա/ քանի որ դա չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամաս, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային, կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը ընդգրկված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, որի օրինականցման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագծերը (կցվում են):
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ **Նոր Հաճն համայնք, Հարավ արևելյան թաղամաս, 5-րդ փողոց, թիվ 19 հասցե:**

4. Նոր Հաճն համայնքի, Հարավ արևելյան թաղամասի, 5-րդ փողոցի, թիվ 19 հասցեում գտնվող Վլադիմիր Ադիբեկի Առաքելյանցին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման 07-006-0054-0011 կադաստրային ծածկագրով, 0.08759 հա օրինական հողամասի վրա կառուցված 160.2 քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, 45.68 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, 13.34 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը, 3.6 քմ արտաքին մակերեսով զուգարանը և 13.86 քմ մակերեսով քարե պարիսպը ճանաչել վերը նշված անձի սեփականություն:
5. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 4-րդ կետում նշված շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոներին համապատասխան, չեն հակասում թաղամասի կառուցապատման պլաններին և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, որի օրինականացման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը սեպտեմբերի 2020 թ. N 193
Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԱՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած բնակելի տունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Կոլյա Ռուբենի Աղաջանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Կոլյա Ռուբենի Աղաջանյանին և Նարինե Վալենտինի Սարգսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2007 թվականի ապրիլի 18-ի N 2333249 վկայական) Հարավ արևելյան թաղամասի 1-ին փողոցի 8 հասցեում գտնվող, 07-006-0051-0004 կադաստրային ծածկագրով՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 63.1 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը համարել օրինական (հատակագծերը կցվում են):
2. Կոլյա Ռուբենի Աղաջանյանը և Նարինե Վալենտինի Սարգսյանը պարտավոր են ինքնակամ կառուցված 63.1 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 132510 (մեկ հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր տաս) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-ը սեպտեմբերի 2020թ. N 194

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԳԻՍ ՋՈՒԼՖՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ, 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ի N 1079-Ն որոշման և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Արտակ Կարոյի Ղուկասյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել փոփոխելու Արտակ Կարոյի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2017 թվականի հունիսի 22-ի N 22062017-07-0004 վկայական) Նոր Հաճն համայնքի Սարգիս Ջուլֆյան թաղամասի, 6-րդ փողոցի, թիվ 2/2 հասցեում գտնվող 07-006-0005-0116 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 800.0 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության այլ հողեր հողամասի գործառնական նշանակությունը որպես բնակելի կառուցապատման հողամաս:
2. Արտակ Կարոյի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի Սարգիս Ջուլֆյան թաղամասի, 6-րդ փողոցի, թիվ 2/2 հասցեում գտնվող՝ 1600 քառակուսի մետր, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 327.6 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 9.36 քառակուսի մետր արտաքին մակերեսով սանհանգույցը, 216.93 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, 30.46 քառակուսի մետր արտաքին մակերեսով ծածկոցը և 9.38 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել օրինական (հատակագծերը կցվում են):
3. Արտակ Կարոյի Ղուկասյանը պարտավոր է ինքնակամ կառուցված 593.73 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունների օրինականացումների համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 1246833 (մեկ միլիոն երկու հարյուր քառասունվեց հազար ութ հարյուր երեսուներեք) դրամ հակառակ դեպքում սույն որոշումը անհամարժեք ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-ը սեպտեմբերի 2020թ. N 195
Նոր Հաճն

ՍԱՄՎԵԼ ՍՈՒՐԵՆԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերի պահանջներով՝ ***որոշում եմ.***

Սամվել Սուրենի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի Տոռոզյան փողոցի թիվ 17/25 հասցեում գտնվող (հիմքը՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը 01092020-07-0089, տրված 01.09.2020 թվականին) և Տոռոզյան փողոցի թիվ 17/26 հասցեում գտնվող (հիմքը՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը 16092020-07-0100, տրված 16.09.2020 թվականին) հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերը միավորելով՝ տրամադրել միասնական հասցե.

- Նոր Հաճն համայնք, Տոռոզյան փողոց թիվ 17/25 հասցե:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-ը սեպտեմբերի 2020 թ. N 196
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ***.

Անահիտ Արտաշեսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ N 1219203/ խանութին և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տալ հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Գայի փողոց, թիվ 6/7 հողամաս:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-ը սեպտեմբերի 2020 թ. N 197
Նոր Հաճն

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով ***որոշում եմ.***

1. Արփինե Արայի Հայրապետյանին տալ խանութի վերակառուցման և ընդլայման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեց պատկանող Նոր Հաճն համայնքի Անդրանիկի փողոցի թիվ 7/5 հասցեի հողամասում:
(շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արփինե Արայի Հայրապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-ը սեպտեմբերի 2020թ. N 198
Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականի մայիսի 03-ին տրված N 8 շինարարության թույլտվության «տրված է կառուցապատող» հատվածի տողում ավելացնել «Անի Սասունի Ղազարյան» բառերը:
2. Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականի մայիսի 03-ին տրված N 112 որոշման վերնագրում՝ «ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ» բառերից հետո լրացնել «ԵՎ ԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ» բառերով, որոշման առաջին և երկրորդ կետերի « Արսեն Պետրոսյանին» բառերից հետո ավելացնել « և Անի Ղազարյանին» բառերով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-ը սեպտեմբերի 2020թ. N 199

Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի, Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ .***

1. Մալխաս Սուրենի Թամոյանին սեփականության իրավունքով պատկանող 07-006-0009-0004 կադաստրային ծածկագրի տակ գտնվող / վկայական՝ 28022019-07-0043/ Անդրանիկի փողոցի թիվ 18 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 56.37 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 14.24 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը և 5.85 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել օրինական:
2. Մալխաս Սուրենի Թամոյանը պարտավոր է ինքնակամ կառուցված 76.46 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունների օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 160566 (մեկ հարյուր վաթսուն հազար հինգ հարյուր վաթսունվեց) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. ՈՒԺը կորցրած ճանաչել Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից հաստատված 2019 թվականի մարտի 27-ի թիվ 4 շինարարության թույլտվությունը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է Մալխաս Սուրենի Թամոյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 200

ԲԺՇԿԻ ՑՈՒՑՈՒՄՈՎ ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿՆ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԵՆԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐ ՀԱՏԿԱՑՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 35-րդհոդվածի 1-ինմասի 24-րդկետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Կոտայքի մարզպետարանի Եղվարդի սոցիալական աջակցության տարածքային գործակալության ներակայացրած բժշկական ցուցուցումով մեկուսացված աջակացության կարիք ունեցող անձանց ցուցակը ինչպես նաև Կոտայքի մարզպետի 2020 թվականի հունիսի 10- ի N 01/08.1/04043 2020 գրությունը և ՀՀ Պարետի N Ց/56-2020 ցուցումը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 1.6.1. <<Կենցաղային և հանրային սննդի> ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4267 հոդվածից 62953<< (վաթսուներկու հազար ինը հարյուր հիսուներեք)դրամի չափով սննդամթերք և սանիտարահիգենիկ պարագաներ հատակացնել համայնքի ներքոհիշալ բնակիչներին՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2020 թ. սեպտեմբեր 25
ք.Նոր Հաճն